

ՀԱՅ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ ՎԱՆ-ՎԱՍՊՊՈՒՐԱԿԱՆԻ ԵՒ ՄԵՐՁԱԿԱՅ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՎԱՆՔԵՐՈՒՄ (ԺԴ.-ԺԸ. ԴԴ.)

ԱՍՏԴԻԿ ՄՈՒՇԵՂԵԱՆ
a.musheghyan@gmail.com

Վանորայք եւ եկեղեցիք Հայաստան աշխարհին մերոյ են մէն մի գանձարանք պահարանք ազգային հնութեանց, բեր ասել եւս եւ ազգային գոյութեանց: Այսոքիկ են վայրք, յորս մենացեալ ամրացեալ ապաստան եղեն ոգիք սրբասէրք եւ տքնասէրք. [...] ծաղկարարք, կազմարարք, երգասացք, շարականք, ճառողք, վարդապետողք, առաջնորդողք, մեկնիչք, պատմիչք, տումարագէտք. սոքա եւ սոյնպիսիք առ հասարակ վանականք են եւ եկեղեցականք ի հինս:

Գ. Վ. Սրուանծտեանց¹

ՄՈՒՏՔ

Հայ երաժշտական մշակոյթի զարգացման գործում անուրանալի դեր են կատարել վանքերն ու նրանց կից բարձրագոյն դպրոցները: Դրանց թւում են Վանայ լճի շրջակայքում կամ, ինչպէս կոչում էին՝ «Ծովու բոլորը» գտնւող Մեծ Հայքի Վան-Վասպուրական, Տարօս-Տուրուբերան, եւ մերձակայ՝ Աղձնիք, Մոկք աշխարհների կրթական հաստատութիւնները: Տարածաշրջանն, առհասարակ, առանձնայատուկ տեղ է գրաւում այնտեղ ծնուած եւ գործունէութիւն ծաւալած հանճարեղ գործիչների համաստեղութեամբ՝ Մեարայ Մաշտոց, Մովսէս Խորենացի, Յովհաննէս Ա. Մանդակունի, Գրիգոր Նարեկացի, Գրիգոր Տաթեւացի, Գրիգոր Խլաթեցի, Յովհաննէս Մեծփեցի, Թովմա Մեծփեցի, Գրիգորիս Ա. Աղթամարցի եւ այլք, որոնք նաեւ փայլուն բանաստեղծ-երաժիշտներ էին: Վասպուրականի Գողթն գաւառի ծնունդ էին հայ հին հռչակաւոր գուսան-վիպասանները՝ *Գողթան երգիչները*, եւ նրանց վերջին շառաւիղը՝ «Հայկունի գերագոյն գուսանն»² Խոսրովիդուստը:

ՎԱՆՔԵՐԻՆ ԿԻՑ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԴՊՐՈՅՆԵՐԸ

Մեծփականքում, Յիպնականքում, Խառաքաստայ Ս. Աստուածածին, Արգելանայ Ս. Աստուածածին, Աղթամարի Ս. Խաչ, Մոկաց, Ռշտունեաց վանքերում ու անապատներում եւ նրանց կից բարձրագոյն դպրոցներում գործում էին մի շարք տաղանդաւոր երաժիշտ-փիլիսոփաներ: Ապրակունիսի եւ Մեծփի բարձրագոյն դպրոցներում էր դասաւանդում Գրիգոր Տաթեւացին (1346–1409). «*ուսուցանէր զնախկին երգիչ վարդապետաց գերաժշտութիւնս քաղցրալուր ծայնի եղանակաւ: Մինչեւ անգամ յամենայն յերկրէ եւ ի քաղաքաց եկեալ պարապէին առ ոյս նորա*»³: Նրա սաները՝ Առաքել Սիւնեցին, Մատթէոս Զուղայեցին, Թովմա Մեծփեցին անուանի երա-

ծիշտ, տեսաբան, տաղասաց ու խազագետ էին: Հայ պաշտոներգութեան եւ առհասարակ ծիսական ու երաժշտաժիսական գրքերի վերախմբագրման հարցում, ինչպէս կարծում է վաստակաշատ երաժշտագետ Նիկողոս Թահմիզեանը, Գրիգոր Տաթեւացին մշակած է եղել որոշակի մօտեցում⁴, որ կիրառել են նրա հետետորդները՝ Գրիգոր Խլաթեցին եւ Մեծփեցին:

Գրիգոր Ծերենց Խլաթեցին (1349–1425), որ Գրիգոր Տաթեւացու հետ աշակերտել է Յովհան Որոտնեցուն, գործունէութիւն է ծաւալել Խառաքատավանքում, Մեծփավանքում, ապա նաեւ՝ Յիպնավանքում⁵: Նա բազմաշնորհ գործիչ էր՝ պատմագիր, գրիչ, ծաղկող, բանաստեղծ, նաեւ փայլուն երաժիշտ, երգիչ, խազագրութեան արուեստի գիտակ, հեղինակ «Խրատ ժամատեղաց» եւ «Գովութիւն Սաղմոսի» ծիսագիտական գրուածքների: Մեզ են հասել նրա ընդօրինակած *Գանձարաններից* մի քանիսը (ՄՄ ձեռ. № 5328, 6851, 8366): Խլաթեցին խմբագրել է *Յայսմատուրք* եւ *Ճառերփոր* ժողովածուները, սակայն նրա ամենակարեւոր ձեռնարկներից մէկը *Գանձարան* ժողովածուի խմբագրութիւնն է, որի համար յօրինել է Տէրունական եւ սրբոց տօներին, հայ մարտիրոս-նահատակներին նուիրուած գանձեր, տաղեր, յորդորակներ ու մեղեդիներ: Խլաթեցու պատկառելի երաժշտաբանաստեղծական ժառանգութիւնից երաժշտական բաղադրիչով յարատեւել են միայն յարութեան «Գոչէր Հրեշտակն» եւ Պետրոս հայրապետին նուիրուած «Ի Հանդէս Տօնի» տաղերը⁶:

Մեծփավանքի բարձրագոյն դպրոցում երաժշտական հիմնաւոր կրթութիւն է ստացել Թովմա Մեծփեցին (1378–1446): Նրա ուսուցիչն էր Յովհաննէս Մեծփեցին. «սնեալ եւ ուսեալ ի Սուրբ Ուխտն Մեծփայ՝ ի դուռն Սուրբ Աստուածածինն, առ ուրս վարդապետին Յոհաննոս՝ շինողի սուրբ Կառնարիս եւ վարժեալ եւ ուսեալ ամենայն երաժշտական արուեստ ուսմանն ի վանքն»⁷: Թովման քաջահմուտ է եղել մանրուսման արուեստի եւ խազագիտութեան մէջ, Մեծփավանքում եւ այլուր ուսուցանել է սաղմոսներ, աղօթքներ, շարականներ եւ ժամակարգութիւն⁸: Ըստ կենսագիր Կիրակոս Վարդապետի՝ գրել է «*ընփոր եւ անսղալ Աղաթամարոյց եւ Մեկնիչք եւ Տունացոյց ի լաւ օրինակաց*»⁹: Յօրինել է հոգետր գանձեր ու տաղեր, ինչպէս նաեւ աշխարհիկ երգեր ու տաղեր¹⁰: Նշանակալի է նրա դերը ծիսական մատենաների՝ գլխատրապետ հայոց *Աղօթամարոյցի* խմբագրման գործում: Ինչպէս նա վկայում է ինքնագիր յիշատակարանում՝ «Արդ, ես՝ մեղապարտս ի մանկունս եկեղեցոյ՝ նուաստ վարդապետս Թովմայ՝ ի յերկրէ Քաջբերունեաց, ի յուխտէ սուրբ Աստուածածինն, որ այժմ Մեծփայ վանք վերածայնի, սրբագրեցի զԱղօթամարոյցս լընփոր լընփոր աւրինակաց յաստուածաբան վարդապետացն եւ հոգիւնկալ մերոյ ազգիս թարգմանչացն, հրամանաւ սուրբ եւ երջանիկ վարժապետացն մերոց եւ համշիրակ հարազատ հոգետր եղբարց»¹¹: Մեծփեցու եւ նրա աշակերտների քանքերով նորովի խմբագրուել են Աւետարանում տեղադրուած կետադրու-

թեան նշաններն ու առողանութեան խազերը, *Սաղմոսարանը*, *Շարակնոցը*, *Մանրոսումը*, *Տոնացոյցը* եւ այլ մատեաններ¹²:

Գրիգոր Խլաթեցուն է աշակերտել տաղերգու, երաժիշտ, խազագէտ Առաքել Բաղիշեցին (մօտ 1380–1454), որն իր ուսուցչին կոչել է «րաբունապետ Հայոց Մեծաց»¹³, «Լուսատրիչ հայոց»¹⁴: Բաղիշեցին բազմաթիւ գանձերի ու տաղերի հեղինակ է՝ «Աստուածածին Կոյս Պատուական» («Գովեստ Առ Սուրբ Աստուածածին»), «Օրհնեալ եւ Սուրբ Աստուածածին» («Տաղ Ծննդեան»), «Օրհնեալ Հայր Երկնատոր» («Տաղ Աւետեաց»), «Այսօր Յարեալ Ի Մեռելոց» («Տաղ Յարութեան») են.¹⁵:

ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԸ

Միջնադարեան կրթական հաստատութիւններում, իրենց երաժիշտ-ուսուցչապետերի ղեկավարութեամբ, աշակերտները հասու էին երաժշտական արուեստի ամենաբազմազան գաղտնիքներին: Հայերէն ձեռագրերի յիշատակարանները տեղեկացնում են, թէ ինչպիսի մանրագլին ու ջանադիր աշխատանք էր կատարում այս ուղղութեամբ: Յատկապէս նշելի է Ռշտունիքի Ս. Վարդան անապատի միաբան Աստուածատուր աբեղայի գրառումը (1418ին). նա շնորհակալութեամբ է յիշում իր քեռուն եւ ուսուցչին՝ Յակոբ վարդապետին՝ իրեն սաղմոս, շարական ու խազ, ինչպէս նաեւ *գիր, ծաղիկ, ոսկել եւ կազմել* սովորեցնելու համար¹⁶: Տասնամեակներ անց (1455ին), արդէն 70ամեայ Աստուածատուր եպիսկոպոսը, իր գրչագրած Աւետարանի յիշատակարանում կրկին երախտիքի խօսքեր է ուղղում Յակոբ վարդապետին, որն իրեն ուսուցել էր «*Սաղմոս, զՇարական, զԳեղորն բովանդակ՝ զԹագաւորք եւ զԱլէլուր, զԺամամրբերն, զՓառերն, զԽոնարհեցութն եւ զՈղորցիքն, զգրագրութիւն, զծաղկել, զկապել, եւ զամենայն բարեմեութիւն կարգաց, որ է ի Սուրբ Եկեղեցի*»¹⁷:

Իւրաքանչիւր ձեռագիր պատրաստում էր տքնանքով, ջանադրութեամբ, սիրով ու երկիւղածութեամբ, որի արդիւնքում ձեռագրական արուեստի կատարեալ նմուշներ էին ծնում: «*Աստուածեղէն եւ երկնապարգեւ գանձ եւ լուսափայլ մարգարիկ*» (Աւետարան, 1481 թ., Կտուց կղզի, գրիչ՝ Խաչատուր¹⁸, Աւետարան, 1483թ., Կտուց կղզի, գրիչ՝ Յոհանէս¹⁹), «*Աստուածախօս բուրաստան*» (Աւետարան, 1483թ., Կտուց կղզի, գրիչ՝ Յոհանէս²⁰), «*Լուսերանգ եւ վարդափոթիթ եւ ծաղկաւէր բուրաստան*» (Մաշտոց, 1486թ., Արճէշ, գրիչ՝ Յովանէս²¹), «*Աստուածային սուրբ կրակ*» (Գանձարան, 1490թ., Արճէշ, գրիչ՝ Յովանէս Արճիշեցի²²), «*Լուսագարդ եւ վարդափոթիթ մարգարտաշար եւ ոսկեակազմ Շարակնոց*» (1506թ., Վան, գրիչ՝ Զաքարիա Երէց²³) - մատեաններին տրուած այսպիսի բնութագրումների ենթ հանդիպում յիշատակարանային գրառումներում: Նշանատու վարպետներն իրենց ստեղծարար աշխատանքով հարուստ ժառանգութիւն են թողել՝ արտագրելով, ծաղկելով, խազագրելով երգչական մատեաններ: Յովհաննէս Մանկասարենցը (ԺԵ. դ., Արճէշի գրչութեան կենտրոն, Թովմա

Մեծփեցու աշակերտ), անխոնջ աշխատելով 72 տարի՝ ընդօրինակել է 130ից ավել ձեռագիր՝ 32 Աւետարան, ինչպէս նաեւ՝ *Աղօթամատոյց, Յայսմատուրք, Ճաշոց, Շարակնոց, Սաղմոսարան, Մաշտոց, Գանձարան* եւն.²⁴: Պատմագիր, գրիչ, մանրանկարիչ, երաժիշտ-տեսաբան եւ խազագէտ Թովմա Մինասենցը²⁵ (ԺԵ. դ., Աղթամարի Ս. Խաչ վանք), որին տուել են «*քաջ եւ արի, մեծ եւ ընդրեալ, անյաղթ փիլիսոփայ եւ քարտուղար*» պատուանունը²⁶, արտագրել է բազմաթիւ մատեաններ՝ Աւետարաններ, Գրիգոր Նարեկացու *Մարտեանը, Մաշտոց, Յայսմատուրք, Ճաշոց, Գանձարան*: 1445ին գրել, նկարազարդել եւ կազմել է մի Գանձարան. «*Եւ նըփրեցի զսա ընծայ եւ նըւէր ի նոյն գերահոջակ եւ յերկնանման փաճարիս՝ ի Սուրբ Խաչս Աղթամարայ, որ է դուռն երկնից եւ ճանապարհ արքայութեան, որպէս զի ուրախասացին սովաւ հանապազ մանկունք եւ սպասաւորք Սուրբ Խաչի փաճարիս համեղաբան գանձիքն եւ քաղցրեղանակ մեղեդաւքն եւ փաղիքն, որ զըծագրեալ կայ ի սմա ի փաւն Տէրունականս եւ ի յիշատակս ամենայն սրբոց [...] ի զարդ ճոխութեան եւ ի փառս պարծանաց կաթողիկէ եկեղեցոյս Սուրբ Խաչիս Աղթամարայ*» (ՄՄ, ձեռ. № 5521, թ. 433ա-433բ, 434բ)²⁷:

Ճանաչուած խազագէտ է եղել Գրիգոր Դպիրը (1424թ., Տարբերունիքի (Բերկրի) Եղեվանք անապատ), որն ըստ Յակոբ գրչի՝ բազում աշխատանք ունէր՝ «*ի տուն տալ խազելոյն*»²⁸: 1464ին Տարբերունիքի Արգելան մենաստանում գրուած (գրիչ՝ Ղազար) *Շարակնոց*ում յիշատակուած են միքանի այլ խազագէտներ՝ «*Դարձեալ, աղաչեմ զձեզ սուրբ հայրք եւ եղբարք՝ զսուրբանուն երեզ Գլգարիա, որ զՇարակնոցս խազեցի եւ զսակաւ յիշատակարանս գրեցի, եւ զՄկրտիչ կրանատրն, եւ զճաղկող վարպետն զՄինաս կրանատրն, եւ զՅակոբ կրանատրն, որք աշխատեցան ի փուն փալ խազին յիշեցեք*»²⁹:

Թովմա Մեծփեցու, Գրիգոր Խլաթեցու եւ Թովմա Մինասենցի կատարած հետետողական աշխատանքի շնորհիւ հաստատուել եւ շրջանառութեան մէջ են դրուել երաժշտաձիսական մատեանների ուրոյն՝ հայաստանեան խմբագրութիւնները³⁰, որոնք կիլիկեան երաժիշտ-տեսաբանների՝ Գրիգոր Իսկի, Գէորգ Սկետացու, Կոստանդի եւ այլոց խմբագրած ժողովածուների հետ մէկտեղ, բացի բուն Հայաստանից, մեծ կիրառում են գտել նաեւ Կիլիկիայում: Մշակութային կապերի ամրապնդման գործում էական դեր են խաղացել երգիչ-երաժիշտների, գրիչների ու ծաղկողների փոխադարձ այցելութիւնները, համատեղ քանքեր են գործադրուել մասնագիտացուած երգարունստը մէկ հունով զարգացնելու ուղղութեամբ: Կիլիկիոյ Սիմէոն Բ. կաթողիկոսը Փիլիպպոս Աղբակեցի Ամենայն Հայոց կաթողիկոսին յղած իր թղթում գրել է. «*Եւ եա երկու ազնուական եւ գերադրական իմաստութիւն կայ Հայոց ազգիս, նախ՝ գրչութեան արհեստն եւ երկրորդ՝ երաժշտութեան. ահա գրչութիւն յայտնի է ընդ ամենայն րեղիս. մանաւանդ որ բազում գրեանք առ ձեզ են, եւ երաժշտութիւն յայտնի է, զի ցրուեալ է*

ամենայն աշխարհս»՝ խորհրդանշաբար միտքն աւարտելով «Սաղմոսն ի Մշայ՝ խազն ի Սսայ» յայտնի ասացուածքով³¹:

ԵՐԱԺԻՇՏ-ՓԻԼԻՍՈՓԱՆԵՐ

Ձեռագրական աղբիւրներում յիշատակութիւններ են պահպանուել վանքերում գործած երաժիշտների մասին³².-

Ազարիա փիլիսոփայ, Ս. Կարապետի կամ Գլակայ Իննակնեայ վանք, ԺԱ.-ԺԲ. դդ.³³,

Յովհաննէս, «զընտիրն ի բեմբականս եւ զանյաղթն յերաժշտականս եւ զանձանձրոյթն ի գրչութեան անհոնջ, զգովելին յամենայն բարեճեսութիւն», 1198թ., Աղթամարի Ս. Խաչ վանք³⁴,

Խաչապուր փիլիսոփայ, Մշոյ Առաքելոց (Ս. Ղազարու) վանքի միաբան, Մշոյ յայտնի Ճառընտիրը փրկագնողներից մէկը, 1205թ.³⁵,

Սարգիս Վարդապետը եւ հինգ այլ փիլիսոփաներ՝ Յուսիկ, Ռստագէս, Աւետիս, Սրեփանոս եւ Ներսէս, Մշոյ Ս. Առաքելոց վանք, ովքեր նոյնպէս իրենց անմիջական մասնակցութիւնն են բերել Մշոյ Ճառընտիրի փրկագնման աշխատանքներին, 1205թ.³⁶,

Յովհաննէս փիլիսոփայ, յիշատակուած Մշոյ Ճառընտիրում, 1205թ.³⁷,

Սրեփանոս փիլիսոփայ Համբարպետցի, «սրբասէր քահանա», «ի հոյակապ... հռչակաւոր... հրեշտակացոյց մենաստանիս Ղազարու վանք կոչեցեալ», Մշոյ Ս. Առաքելոց վանք, 1312թ.³⁸,

Սրեփանոս եւ Յովհաննէս, միաբան եղբայրներ Փութկու (Սարի) Ս. Գէորգ վանքում (Մոկաց աշխարհի Մոկք Առանձնակ գաւառում)՝ «սրբասնեալ եւ անյաղթ», «նազելի փիլիսոփայք եւ վարպետ ծովու բոլորին», որ սովորեցնում էին «բազմաց՝ ի յերգս երաժշտական եւ ի բանս հոգեւորական», 1370, 1381, 1386թթ.³⁹: «Պսակ եկեղեցոյ» անուանեալ Յովհաննէս վարդապետը դարձաւ նաեւ Ս. Գէորգ վանքի վանահայրը⁴⁰,

Թումա «երջանիկ եւ սրբասնունդ» փիլիսոփայ, Ոստան քաղաք, «ընդ հովանեաւ» Ս. Աստուածածնի եւ Ս. Ստեփանոս Նախապկայի եւ Ս. Գէորգ զօրավարի, 1382 եւ 1390թթ.,

Յովհաննէս փիլիսոփայ, Գաւաշ գիւղ (Վասպուրական աշխարհի Ռշտունեաց գաւառ), 1389թ.,

Յովհաննէս փիլիսոփայ, «սրբասէր եւ պապուական» քահանայ, Աղթամարի վանք, 1390թ.,

Սարգիս Սորբեցի⁴¹, «մեծ պուետ եւ վարդապետ», ԺԴ. դ., աշակերտ Եսայի Նչեցու, Ժամանակի երեւելի դէմքերից մէկը, որի շնորհիւ Մոկաց Սարի Ս. Գէորգ վանքը մեծ ծաղկում ապրեց⁴²,

Արոմ վարդապետը, որին կոչել են «իմաստասէր փիլիսոփայ», Աղթամարի Ս. Խաչ վանք, 1421թ.⁴³,

Սարգիս փիլիսոփայ Վարագեցի, Մեծփավանքի միաբան, 1411թ.,

Թադէոս փիլիսոփայ, որ Արճէշում ստացել էր Աւետարան եւ նուիրել Մեծփալանքին, եւ նրա ուսուցիչ *Սրբփանոս փիլիսոփայ*, 1412թ.,

Յովհաննէս փիլիսոփայ, սրբասէր քահանայ, Ռշտունիքի Տշող գիւղ, 1415թ.,

Թումա եւ Յովհաննէս փիլիսոփաներ, Ոստան քաղաքի Ս. Աստուածածնի եւ Ս. Ստեփանոս Նախավկայի վանք, 1418 եւ 1419թթ.,

Յովհաննէս փիլ. Ամիրլոսեանց, Գորգ, Աստուածապօր եւ Արոմ փիլիսոփաներ, Ոստան քաղաքի քահանաներ, 1419ից առաջ,

Սրբփանոս փիլիսոփայ, առաջնորդ Պատրկի վանքի (Ռշտունիք), 1420թ.,

Սարգիս եւ Վարդան փիլիսոփաներ, Ռշտունեաց Լիմ անապատի միաբաններ, 1421թ.,

Թովմա փիլիսոփայ Վարագեցի, 1424թ.,

Սիմէոն վարդապետ Ռշտունցի, տաղերգու, 1427ից Ռշտունեաց Ս. Յակոբ վանքի առաջնորդ, միքանի տաղերի հեղինակ⁴⁴,

Ներսէս փիլիսոփայ, միաբան Կողոլց վանքի (Տուրուբերան աշխարհի Արծկէ գաւառակ), 1428թ.,

Արահամ եւ Ծերուն փիլիսոփաներ, Մեծփալանք, 1435թ.,

Սրբփանոս քաջ փիլիսոփայ, Բերկրիի Արգելան անապատ, 1437թ.,

Յակոբ փիլիսոփայ, Արգելանի վանքի հոգեւոր հայր, 1439թ.,

Տէր Սարգիս երաժիշտ, Մշոյ Ս. Յովհաննու վանքի միաբան, 1445թ.⁴⁵,

Վարդան քաջայաղթ փիլիսոփայ, Տարբերունիքի (Առբերանի) Արգելանի վանք, 1464թ.,

Տէր Յովհաննէս, Տէր Աւերիս, Տէր Հերապետ, Տէր Սրբփանոս փիլիսոփաներ, Աղթամարի Ս. Խաչ վանք, 1465-71թթ.,

Մխիթար փիլիսոփայ, Հիզնա երկրի Սորի գիւղ, 1473թ.,

Մովսէս փիլիսոփայ, սրբասէր կրօնաւոր, Հիզնա երկրի Սորի գիւղ, 1474 թ.,

Սադաղայ երէց Ոստանցի, տաղասաց, ԺԵ. դ., Ոստանի Ս. Ստեփանոս եկեղեցու քահանայ, որ 1476ին գրել է «Հրաշալի Խորհուրդ Այսօր Մեզ Երեւի» Ծննդեան մեղեդին (ՄՄ, ձեռ. № 519) եւ «Սիրով Սիրելի Որդին» Ծննդեան տաղը⁴⁶,

Տէր Արոմ, պապական փիլիսոփայ, Ոստան քաղաքի քահանայ, 1486 թ., «մեծ փիլիսոփայն Խաչապօր», Խլաթի Մատենականից Ս. Աստուածածնի ԺԱ խորանաց վանք, 1490թ.⁴⁷,

Յովհաննէս քաջ փիլիսոփայ, Ունկարու Ս. Նշան վանք, 1490թ.,

Տէր Հայրապետ, «մեծ եւ ընդրեալ» փիլիսոփայ եւ քարտուղար⁴⁸, Աղթամարի Ս. Խաչ վանք, 1492, 1493 եւ 1498թթ.,

Տէր Յովհաննէս, «քաջ եւ արի եւ ընտրեալ» փիլիսոփայ, Աղթամարի Ս. Խաչ վանք, 1493թ.,

Սրբփանոս Վարագեցի (թուականն անյայտ), *Արոմ Վարագեցի* (ԺԵ. դ.) եւ *Յովհաննէս Վարագեցի* (թուականն անյայտ), Վարագավանք,

Յովհաննէս Պուրըլկեցի վարդապետ, գանձասաց, Վասպուրականի Պուտլիկ վանք, ԺԵ. դ.,

Արիստրակես (Ռստրակես) Հիզանցի եւ Աագ վարդապետ տաղասացներ, որոնց յիշատակում է Գրիգոր Խլաթեցին «Յիշատակարան եւ Գովեստ Վարդապետացն» չափածոյ երկում, ԺԵ. դ.⁴⁹

Եղիա եպիսկոպոս (1542, 1550, 1562թթ.) եւ Անդրէաս (1589թ.) տաղասացներ, Արգելանի վանք,

Տէր Աստուածաբար, քաջ եւ արի փիլիսոփայ, Խիզան, 1581թ.,

Մարտիրոս քաջ փիլիսոփայ, որին յիշում է Խաչատուր Խիզանցին 1595ին իր ծաղկած ձեռագրի յիշատակարանում. «յիշեցէք ինձ եւ ծնողաց իմոց եւ ուսուցանող վարդապետին իմոյ»⁵⁰,

Զաքարիա երգասաց րաբունի, Վարագավանք, յիշատակում է 1551ին, հեղինակել է «ԶՎարագն Ասեմ Զբաղձալին» «չքնաղ երգը» (ընդորոշումը՝ Գրիգոր սարկաւազ Վարագեցու)⁵¹,

Փիլիպպոս Մոկացի, տաղերգու, ԺԶ. դ., որ գրել է Աղթամարի Ս. Խաչ վանքին նուիրում «Փառաց Անեղին Տաճար Տէրունի» տաղը⁵²,

Ստեփաննոս արքեպիսկոպոս փիլիսոփայ, աթոռակալ Սուրբ Ուխտին Վարագայ, 1591-1602թթ.⁵³,

Կարապետ րաբունապետ փիլիսոփայ (մականուն Զամայ), Վարագավանք, 1591թ.⁵⁴, 1602թ.⁵⁵,

Բարսեղ վարդապետ Աանեցի կամ Վարագեցի (ԺԵ.-ԺԶ. դդ.), գրիչ, երաժիշտ, տաղասաց, որ քաջ տիրապետել է մանրամասն արուեստին: Ուսանել է Վարագավանքում եւ յետոյ դասաւանդել այնտեղ: Իր ձեռքով արտագրուած միջանի ձեռագրեր են պահպանուել՝ *Անեպարան, Մանրամունք, Շարակնոց*: 1602ին ընդօրինակել է նաեւ Ոսկեփորիկի մի մասը, որի յիշատակարանում միա գրիչը՝ Անեփա Մոկացին, նրան կոչում է «գրաւորածայն երաժիշտն, զբանաւոր ծիծեռն»⁵⁶,

Տէր Գրիգոր փիլիսոփայ Ղարաղզեց, Վասպուրականի Աանց գիտաքաղաք, «ընդ հովանեաւ Սուրբ Գրիգորի Լուսաւորչին եւ Սուրբ Յովհաննէս Մկրտչին», 1597թ.⁵⁷,

Տէր Յովհաննէս Խիզանցի երաժիշտ, ԺԶ. դ., Վարագ⁵⁸,

Արիստրակես քաջ երաժիշտ, Եղորդուտի Ս. Յովհաննէսի վանք (Մուշ), 1630թ.⁵⁹,

Գրիգոր եպիսկոպոս երաժիշտ, գործել է Եղորդուտի Ս. Յովհաննէսի վանքում եւ 1676ին մասնակցել Ժամագրքի ընդօրինակման աշխատանքներին. մատենան ընծայուել է Եղորդուտի Ս. Ուխտին, «ուր կան շար սրբութիւններ, Սուրբ Շիշ Իւղն, որ Քրիստոս յետ Խաչելութեան օրինեաց եւ Սուրբ Թադէոս բերեալ աստ ետն ի ծառն Եղորդի առ սպորոսփոլն Եղորդի՝ առ սպորոսփոլն լերինն Տաւրոսի: Աստուածաբեր Ս. Նշանն որ եբեր Ս. Գրիգոր Լուսաւորիչն եւ զկախ թեկն մեծին Յովհաննու վանքս Շիշ Իւղոյ վանք եւս վերածայնի...»: Միաբանների մէջ յիշատակում է նաեւ Գրիգոր եպիսկոպոսի ուսուցիչ Մարտիրոս երաժիշտը⁶⁰: Ընդհանրապէս, Ս. Յով-

հաննէսի վանքը, ըստ վկայութիւնների, մեծ եւ կարեւոր դեր է ունեցել իր երաժշտական դպրոցով⁶¹:

Տէր Միքայէլ Վանեցի, «յոյժ երաժիշտ», 1796թ.⁶²:

ԵՐԱԺՇՏԱՐԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆԸ.

Արծկէի Վարդապետարան. Յակոբ Նետրարենց

Երաժիշտ-փիլիսոփաները ստեղծագործական մեծ ժառանգութիւն են թողել: Այդ են վկայում տուեալ ժամանակաշրջանից մեզ հասած *Գանձարաններում եւ Տաղարաններում* սփռուած բազմաթիւ երգերը⁶³:

Յակոբ Նետրարենցը (Արծկէցի, ծն. թ. Անյայտ–1501)⁶⁴, Արծկէի եպիսկոպոս, եղել է յայտնի երաժիշտ, գանձասաց եւ տաղասաց, յիշատակուել որպէս «շնորհաձաւալ եւ զբաշ քարտոզարն եւ զանյաղթ փղիսոփայն»⁶⁵: Կրթութիւնը ստացել է Տուրուքերան աշխարհի Բզնունեաց գաւառի Արծկէ քաղաքի վարդապետական դպրոցում: Լինելով գրչական արուեստի հմուտ գիտակ՝ Արծկէի Սքանչեւագործ Ս. Նշան վանքում զբաղուել է ձեռագրերի ընդօրինակութեամբ՝ արտագրելով *Անեւարաններ*⁶⁶ ու *Գանձարաններ*. վերջիններիս թում են՝ ՄՄ № 5438 (1491թ.) եւ Երուսաղէմի հաւաքածոյի № 278 (ԺԵ. դ.)⁶⁷ ձեռագրերը: Նետրարենցի գրչի արգասիքն են՝ «Յիսուս Քրիստոս Արքայդ Համայնից» (գանձ Սքանչեւագործ Ս. Նշանին Արծկոյ քաղաքէ), «Իսկ Մեծ Մարիամ Մագդաղենացին» (տաղ Յարութեան), «Գարուն է Բացուեր» (Տաղ ի վերայ Աստուածածնայ), «Սքանչելի Սուրբ Նշանդ Պատուեալ» (տաղ ի Սքանչեւագործ Ս. Նշանին Արծկէոյ), «Խաչն եղիցի Մեզ Պահապան» (տաղ Ս. Խաչին), «ՅԱստուծոյ Ընտրեցար Դու Բարի» (տաղ Ս. Գէորգայ), «Յաւուր Յարութեան» (տաղ Յարութեան), «Տուք Օրինութիւն Տեառն Աստուծոյ» (տաղ գարնան *ազնիւ*) եւ այլ երգեր⁶⁸:

ՄՄ № 5438 *Գանձարանի* մեր կատարած ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ վերոնշեալից բացի՝ Յակոբ Նետրարենցի հեղինակած տաղերի շարքին աներկբայօրէն պէտք է դասել նա երկուսը.–

1. Ս. Աստուածածնի Վերափոխման տօնին նուիրուած՝ «*Յորդորակ* («Ա-Ք»): Արեւ Լուսալու, Տաճար Աստուծոյ» (թ. 256բ–257բ), որին յաջորդում է «*Ջերգողս յիշեսցես, արժան առնես զիս մի ողորմոյ. զՅակոբ եպիսկոպոս քաղաքէն Արծկոյ*» գրառումը (թ. 257բ–258ա).
2. «Ի Յակոբ եպիսկոպոսէ Նետրարենց Արծկէցոյ. ասացեալ տաղ Սրբոց Վարդանանց: Սուրբ Վարդան զարաւարդն բարի...» (թ. 148բ–149բ), որի վերջում հեղինակը տալիս է իր անունը՝ «*Որ ով եմ ես՝ Յակոբ եղկելիս, որ չունիմ ես ըզգործըս բարիս, որ զըրեցի զայս բաներս ի քարտիս, այս հայոց պարտական իշխանիս*» (թ. 149բ):

Ունենք երկրորդ տաղի աւելի վաղ օրինակը՝ «Տաղ Անոյշ Ի Յակոբ եպիսկոպոսէ» վերտառութեամբ, որ տեղ է գտել 1490ին Արճէշում գրուած *Գանձարանում*⁶⁹: Յետագայ ձեռագրերից մէկում «Սուրբ Վարդան» եւ «ՅԱստուծոյ Ընտրեցար» տաղերն ունեն յղում՝ «Սուրբ Ոսկի քահանայի

գոյնն ասա»⁷⁰, այսինքն՝ կատարում էին Գրիգոր Խլաթեցուն ընծայուող «Սուրբ Ոսկի, քահանայր նազելի» տաղի ծայնեղանակով:

Առհասարակ, Յակոբ եպիսկոպոս Նետրաբեցի տաղերը շատ սիրուած եւ տարածուած են եղել, իսկ մեղեդիները, ըստ գրչական գրառումների՝ «բաղցր եւ անոյշ, խիստ անոյշ եւ համեղ»:

Բաղէշի Խնդրակատար Ս. Աստուածածին եւ Ամրդոլու Վանքեր

Մեծ համբաւ ունէին Աղծնեաց աշխարհի Սալնոծոր գաւառի Բաղէշ քաղաքում գտնուող Խնդրակատար Ս. Աստուածածին եւ Ամրդոլու վանքերը, որտեղ գործունէութիւն են ծաւալել յայտնի վարդապետեր Յովհաննէս Համ-շէնցին, Գրիգոր Արճիշեցին, Ներսէս Մոկացին՝ Մատաղը, Ներսէս Բաղի-շեցին, Ներսէս Ամկեցին, Ներսէս Մոկացին (Բեղլու), Բարսեղ Բաղիշեցին (Կարպելացի), Վարդան Բաղիշեցին եւ այլք: Վանքերը յայտնի էին որպէս նշանաւոր գրչակենտրոններ, որտեղ բազմաթիւ երաժշտածիսական մատ-եաններ էին գրում: Այս բազմաշնորհ գործիչներից շատերը բանիւրոն երաժիշտներ էին եւ երաժշտաբանաստեղծական ուշարժան ժառանգու-թիւն են թողել, որից երաժշտական բաղադրիչով յարատեւած հազուագիւտ նմուշներից է Ներսէս վարդապետ Մոկացուն (Մատաղ) վերագրուող «Այսօր Տնծայ Լեառն Թաքօր» Պայծառակերպութեան տաղը⁷¹:

Նշեալ վանքերից յայտնի են նաեւ այլ երաժիշտներ.-

*Յովհաննէս վարդապետ Բրգութենց Ոստանցին*⁷² (ծն. թ. անյայտ—1589) ուսումը ստացել է Նախ Վարագում, ապա Բաղէշում՝ աշակերտելով Ներսէս Վրդ. Ամկեցուն, գրել է գանձեր եւ տաղեր՝ նուիրուած Աղթամարի Ս. Իսաչին եւ Գետարգել Ս. Նշանին: Յովհաննէս վարդապետին բազմաթիւ տողեր են նուիրել իր աշակերտները՝ Ներսէս Բաղիշեցին («Փիլիսոփայն քաջ եւ արի,/ Զոր Գրիգորի նման լինի,/ Նարեկականից վանականի»⁷³), եւ Սիմէոն Ապա-րանեցին («Գանձ, մեղեդի երգ սըրբասաց,/ Զհոգեւորն պըտուող շըրթանց,/ Գրով թողեալ աշակերտաց»⁷⁴):

Կարապետ վարդապետ Բաղիշեցին (Փարխնդեցի, ծն. թ. անյայտ—1623) եղել է Բաղէշի Խնդրակատար Ս. Աստուածածին վանքի առաջնորդ: Գանձերի եւ տաղերի հեղինակ է, այդ թւում՝ «Կենդանարար Որդիդ Միա-ծին» (գանձ Գրիգորի Աստուածաբանի, անուանական ծայրակապով)⁷⁵:

Ներսէս Վրդ. Մանուկենց Մոխրաբերդցին (Բաղիշեցի, 1580—1634⁷⁶), Բաղէշի եպիսկոպոս, Խնդրակատար Ս. Աստուածածին վանքում աշակեր-տել է Կարապետ Վրդ. Բաղիշեցուն, գրել է «Անեղն Աստուած Անճառական» («Յիսուա Որդու Գոյն»), «Անսկիզբն Անճառ Աստուած», «Աստուած Անհաս Անեզրաբար» եւ այլ տաղեր⁷⁶:

Իսաչապուր Վրդ. Բաղիշեցին եղել է Ամրդոլու վանքի առաջնորդը. ուսուցիչն ու հոգեւոր ծնողն էր Վարդան Վրդ. Բաղիշեցու, որը նրան անուանել է «անյաղթ պուեպոսն եւ փիլիսոփոսն Հայրց» (1659ին Լիմ անապատում նորոգուած Աստուածաշնչի յիշատակարան)⁷⁷:

*Սարգիս Վրդ. Ամթեցին*⁷⁸, որ ուսանել է Ամրդոլու վանքում, եղել է երաժիշտ, գրիչ եւ ծաղկող: 1653ին ընդօրինակած մի *խորհրդապետ*ը իրեն կոչել է «ջախընկալ ձայնական»⁷⁹: Ըստ ձեռագրի ստացող Վարդան Բաղիշեցու՝ եղել է «վարդապետ ընտիր եւ առաքինի»⁸⁰: 1653ին Ամրդոլու Ս. Յովհաննէս Մկրտիչ վանքում Սարգիս Ամթեցին մասնակցել է Մխիթար Գօշի «Մեկնութիւն Մարգարէութեան Երեմիայի» (ԺԵ.-ԺԶ. դդ., տեղն անյայտ) ձեռագրի վերանորոգման աշխատանքներին՝ մեծ վարպետութեամբ վերականգնելով վնասուած մատեանը: Այդ մասին վկայում է Վարդան Բաղիշեցին իր գրած յիշատակարանում՝ «*հասեալ ի վերայ կորզեաց զգառս ի ժանգահոյր վայրէն եւ վեր առեալ զսա իբր զմարգարիւր ի փղմէ*»⁸¹ խնդրելով յիշել «*զՍարգիս քաջ երաժիշտն եւ զարագագիր գրչապետն եւ նկարողն*» Միջագետքի Ամիդ քաղաքից: Սարգիս երաժշտի մասին այլ վկայութիւն ենք գտնում Գրիգոր դպիր Մարգուանեցու⁸² հրատարակած *Յայսմատուրքի* յիշատակարանում, ուր նա նշում է, որ ինքը ձեռնասուն աշակերտն էր «*Տիգրանակերպոցի Ծաղիկ երաժիշտ Սարգիս գիտնական վարդապետին, որ ի յԱմրդոլու դասստանէն էր վարժեալ աստուածային գրոց*»: Իր ուսուցչից Գրիգոր դպիրը սովորել էր նաեւ «զընթերցողութիւն եւ զծաղկարարութիւն», 1684ին նրա հետ քարոզչական գործունէութիւն ծաւալել Կ. Պոլսում⁸³:

Գրիգոր Վրդ. *Շղթայակիրը, Շիրվանցի, Բաղիշեցի*, Երուսաղէմի պատրիարք (1715-49), Վարդան Վրդ. Բաղիշեցու աշակերտն էր: Գրել է գանձեր եւ տաղեր, ինչպէս օրինակ՝ «Աղերս Առ Ս. Հոգին Աստուած» («Ճաշակ Դու Քաղցրութեան»), երգեր՝ նուիրուած Ս. Աստուածածնին՝ «Ահա Ես Դու Գեղեցիկ», «Բանին Եղեր Լուսոյ Խորան», «Արեւ Պայծառ եւ Գեղեցիկ Մարիամ», «Մայր Աստուծոյ եւ Բնակարան», «Ողջոյն Ընդ Քեզ Կոյս Ամէնօրինեալ Տիրուհի», Տիրամօր Վերափոխմանը՝ «Ի Լրման Ամաց Կուսին Մօր Շնորհաց», Ս. Խաչին՝ «Ահեղաքանչ Լոյսդ Երկնային», Ս. Խաչելութեանը՝ «Ի Լեռան Մեծ Զարմանայի», Ս. Ստեփանոսին՝ «Անմահ Անեղին», Ս. Հրեշտակապետաց՝ «Անմահ Բանին Երկնատրի» են.⁸⁴:

Աբրահամ Բ. *Խոշաբեցին*, նաեւ՝ *Բաղիշեցի, Մշեցի, Քեղեցի*, Ամենայն Հայոց կաթողիկոս (1730-34), եղել է Մուշի Ս. Կարապետ (1708-14), եւ Տառնի Ս. Կարապետ վանքերի վանահայրը (1717-30): Այր էր՝ «*առաքինի եւ ճգնազգեաց, հեզ եւ բարեբարոյ, աղօթասէր եւ փօնակալար»*⁸⁵: Հեղինակ է ներբողական եւ հոգետր միջանի տաղերի, որոնցից են՝ «Սուրբ Յարութիւնըն Յանկայի» (նուիրուած Երուսաղէմի Ս. Յարութեան տաճարին), «Ի Վեցնորորդ Դարուն Հասեալ» («Տաղ Ի Վերայ Անտեսաց Ս. Կուսին»), «Յերուսաղէմ Քաղաք Մեծի Տէրունեան» («Տաղ Սրբոց Յակոբեանցն Առաքելոց»), «Յանգոյն Նախնոյն Սօրն Եայի» («Տաղ Ի Վերայ Սուրբ Կուսին Աստուածածնայ»), «Ամէնօրինեալ Անապական» («Տաղ Ի Վերայ Սուրբ Կուսին Աստուածածնայ») են.⁸⁶:


Աղթամարի Ս. Խաչ Վանք

Մեծ Հայքի Վասպուրական նահանգի Ռշտունեաց գաւառի հոգակաւոր հոգեւոր-մշակութային կենտրոններից էր Աղթամարի Ս. Խաչ վանքը, որը Նշանատր դարձաւ ոչ միայն մատենագրութեան ու գրչութեան, ճարտարապետութեան ու մանրանկարչութեան, այլեւ երաժշտարուեստի ասպարէզում ձեռք բերած իր նուաճումների եւ բազմահարուստ ժառանգութեան շնորհիւ⁵⁷: Ականատր մշակութային գործիչներից են արդէն յիշատակուած *Թովմա Մինասենցը*⁵⁸՝ երաժիշտ-տեսաբան ու խազագէտ, մատենագիր, ձեռագրական արուեստի փայլուն գիտակ, *Ջաքարիա Աղթամարցին* (ԺԴ.-ԺԵ. դդ.)՝ երաժիշտ-փիլիսոփայ, գրիչ, մանրանկարիչ, որ գրել եւ նկարագրողել է *Անւարարաններ*, *Ճառքնորի* եւ *Ճաշոց* գրքեր⁵⁹:

ԺԵ.-ԺԶ. դարերում է ապրել եւ ստեղծագործել *Յովսէփ վարդապետ Աղթամարցին*⁶⁰՝ բանաստեղծ, գրիչ, ծաղկող: Նա 1496ին եւ 1497ին Աղթամարում նկարագրողել է Մատթէոս գրչի ընդօրինակած *Անւարարաններ*⁶⁰, 1497ին Արգելանի վանքում (Բերկրի) արտագրել մի Շարակնոց՝ «Խլկցի» ընտիր օրինակից⁶¹, 1499ին՝ ծաղկել *Մաշտոց*⁶²: 1503ին գրել ու ծաղկել է մի ժողովածոյ, որը բովանդակում է Մանրումունք՝ «սարգեալ յերկուց արփնակաց ի Սըսցեցն եւ ի Մինասենց տէր Թումի արփնակէն»⁶³: Այնուհետեւ Աղթամարում ընդօրինակել ու նկարագրողել է երեք *Շարակնոց*⁶⁴ մէկը 1504ին⁶⁴, միա երկուսը՝ 1512ին⁶⁵: 1533ին Լիմում գրել է մի *Մաշտոց* եւ նուիրել Աղթամարի Ս. Խաչ եկեղեցուն՝ «վկայութեամբ Գրիգորիս կաթողիկոսին» (Աղթամարցի)⁶⁶: Կարծիք կայ, որ ԺԵ. դ. վերջին գրուած *Գանձարանի* (ՄՄ, ձեռ. № 5398) գրիչ, ծաղկող եւ ստացող *Յովսէփը* նոյն Աղթամարցին է⁶⁷: Նշանատր վարպետը մանրանկարչութեան արուեստ է դասաւանդել Գրիգորիս Աղթամարցուն եւ Ջաքարիա Գնունեցուն, ովքեր իրենց ուսուցչին են ձօնել բանաստեղծութիւններ՝ Գրիգորիս Աղթամարցին «Գովեալ Սուրբ Հայր Ոմն Յարակայ» (ծայրակապ՝ «Գրիգորիսե Յովսէփին է») ⁶⁸, իսկ Ջաքարիա Գնունեցին՝ «Ջաւրք Անմարմնոցն Հիանալով» («ծայրակապ՝ «Ջաքարիա նըաստէ վարդապետին է») ⁶⁹ սկզբնատողերով: Յովսէփ Աղթամարցին նաեւ մի շարք բանաստեղծութիւնների հեղինակ է⁷⁰:

Վասպուրական աշխարհի ականատր գործիչներից է բանաստեղծ, երաժիշտ եւ մանրանկարիչ *Գրիգորիս Ա. Աղթամարցին* (ԺԶ. դ.), Աղթամարի կաթողիկոս (1512-44): Կրթութիւնը ստացել է Արճէշի Ունկարի Ս. Նշան վանքում, աշակերտելով Գրիգոր վարդապետ Արճիշեցուն: Աշխարհիկ եւ հոգեւոր բազմաթիւ տաղերի հեղինակ է⁷¹, նուիրուած՝ Տէրունական եւ սրբոց տօներին՝ «Առ Յիսուս Փրկիչ»՝ «Դու ես յԱղենայ Դրախտէն», «Գանգատ Առնեմ Սիրով Քեզ», Քրիստոսի Խաչելութեանը՝ «Արեգակն Արդարութեան», «Ի Ս. եկեղեցի»՝ «Գովեմ Զքեզ Մարմնով Հրեշտակ», «Առ Ս. Անտոն Թեբայեցի»՝ «Աստուածանկար Պատկեր» եւն.: Մեծ թիւ են կազմում Ս. Աստուածանին ձօնուած երգերը՝ «Անեղին Տաճար», «Արքային Փակեալ Պարտէզ», «Տապանակ Կազմեալ Անփուտ», «Արեգակնափայլ Գեղով», «Ա-

հա Այգիբ Մեր Ծաղկեցան»: Այս երեսիկի երաժշտաբանաստեղծական ժառանգությունից երաժշտական բաղադրիչով պահպանուել է միայն «Անեղին Տաճար» տաղը, որը տուեալ տարածաշրջանից ու դարաշրջանից հասած հազուադիպ երգուող նմուշներից է¹⁰²: Մեղեդու ինքնաբերական յորդումը, երգային լայնաշունչ ծաալումը, նրբին ու հեզասահ անցումները՝ Ս. Աստուածամօր հրաշագեղ պատկերի կերտումն են: Գրիգորիս Աղթամարցին տիրապետել է նաեւ գրչութեան արուեստին¹⁰³, եղել վարպետ մանրանկարիչ՝ աշակերտելով Յակոբ Զուղայեցուն եւ Յովսէփ վարդապետ Աղթամարցուն¹⁰⁴: Նրա նկարազարդած մատեաններից են Մաշտոց-Գանձարանը¹⁰⁵, «Պատմութիւն Աղէքսանդրի» երկու ձեռագրերը¹⁰⁶:



Գրիգորիս խաթեցու ինքնագիրը (ՄՄ, ձեռ. № 5328, Գանձարան, ԺԵ. դ. (1408ից յետոյ), Յիսնավանք, թ. 36բ)

Յիսուս Քրիստոսի մկրտութիւնը, ծաղկող՝ Գրիգորիս Աղթամարցի (ՄՄ, ձեռ. № 962, Մաշտոց-Գանձարան, 1530թ., Արճէշ, գրիչ՝ Յովանէս, թ. 110բ)

Գրիգորիս եւ Յովսէփ Աղթամարցիներին է աշակերտել Զաքարիա եպ. Գնունեցին (ԺԶ. դ.)՝ գրիչ, մանրանկարիչ եւ տաղասաց: Ուսուցիչներին յիշում է իր գրած եւ ծաղկած Շարակնոցում. «դարձեալ աղաչեմ յիշել ի Տէր զգուսուցիչն իմ. զշնորհազարդ եւ զպատուական հայրապետն Գրիգորիս Աղթամարցին եւ զՅովսէփ վարպետն, որ շար աշխատեցան ի յուսու-

ց/ան/ելն իմ» (ՄՄ, ծեռ. № 1613, Շարակնոց, 1576 թ., Լիմ, «ընդ հովանեաւ տաճարիս Սրբոյն Գէորգայ», թ. 319բ)¹⁰⁷: Զաքարիա Գնունեցին գրել է հոգեւոր եւ աշխարհիկ մի շարք տաղեր՝ Ս. Աստուածածինն նուիրում ձ «Ամէնօրինեալ Սրբուի», ինչպէս նաեւ «Զաւրք Անմարմնոցն Հիանալով», «Ի Քէն Տէր Հայցեմ, Հայր Գլթական», «Առաջին Մարդոյն Նմանիս» եւն.¹⁰⁸: Աղթամարի վանքում է գործել *Ներսէս երաժիշտը*, «ի թուին ՌՃՂ» (1741), «այր յոյժ հոռտոր, եւ տեղեակ արտաքին փիլիսոփայական արհեստին. մանաւանդ երաժշտական արհեստին այնպէս տեղեակ էր երաժշտականին մինչ տարածեալ էր համբաւ գիտութեան որ ընդ ամենայն աշխարհս հայոց. էր հիանալի եւ զարմանալի գրեթէ հրեշտակաց եղանակ ունէր»: Ներսէս երաժիշտը մեծ ճանաչում ունէր անգամ Երուսաղէմում, ուր ուխտի էր գնացել: Ս. Յակոբ տաճարում նա հիացրել էր ներկաներին եկեղեցական եղանակների քաջիմացութեամբ եւ զմայլելի երգեցողութեամբ. «Իսկ մեծ պատուիրագն Յովակիմ յայնժամ զժամ աղօթից յետս դարձոյց, զՏէր զի բազում սկսեաց. եւ ապա կոչեաց զտիրացու Ներսէս ի դաս: Եւ իբրեւ եբաց զբերանն գովելի հնչեցուց զձայնն ամենաբաղձալի ի լսելիս ամենայն ժողովորոց: Ապա գրոհ տուեալ ամենայն ազգաց գալ եւ լսել զեղանակն անլսելի [...]: Անդ էր հիացում եւ զարմացումն, զի լսանէին զձայն քաղցր եւ անուշ որ ոչ էին լուեալ: Եւ ապա մատուցանէին զվառս այնպիսի շնորհաց Տուողին»¹⁰⁹:

ԵԶՐԱՓԱԿՈՒՄ

Յիրաւի, դժուար է գերազնահատել այն վիթխարի դերը, որ ունեցել են միջնադարեան վանքերում գործունէութիւն ծաւալած երաժիշտ-փիլիսոփաները: Այս անխնջ մշակների ջանքերով գրչակնետորոններում ընդօրինակուել եւ խազագրուել են երաժշտաճիսական մատեաններ, հաստատուել երաժշտական ասանդոյթներ: Այս առումով ակնառու է Վան-Վասպուրականի եւ մերձակայ շրջանների վանքերում իրենց խոնարհ եւ ազնիւ աշխատանքը կատարող գրիչների, երաժիշտ-տեսաբանների, խազագէտների, շարականագիրների ու տաղերգուների, ինչպէս նաեւ վանքերին կից բարձրագոյն դպրոցներում կրթութիւն ստացած եւ հայ մասնագիտացուած երգարուեստի զարգացմանը նպաստ բերած մեծահամբաւ երաժիշտների վաստակը, որոնք իրենց հանճարեղ նախնիների՝ Մեսրոպ Մաշտոցի, Ոսկեդարեան միա հեղինակների եւ Գրիգոր Նարեկացու երաժշտարուեստի արժանի յետնորդներն են:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

¹ Գ. Վ. Սրուանձտեանց, *Հնոց եւ Նորոց. Պատմութիւն Վասն Դպրի եւ Մովսէսի Խորենացոյ*, Կ. Պոլիս, տպ. Ե. Մ. Տնտեսան, 1874, էջ 3:

² Հ. Ղ Ալիշան, *Յուշիկը Հայրենեաց Հայոց, Հոր. Բ, Վենետիկ, Ս. Ղազար, 1870, էջ 196:*

³ Մեսրոպ Մաշտոցի անունան Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 7823, թ. 25բ: Ըստ Լեւոն Խաչիկեանի՝ ձեռագրական այս մեջբերումը Դավթ Բաղիշեցու Պատմութիւնից է՝ Լ. Խաչիկեան, «Գլածորեան Համալսարանի եւ Նրա Սաների Աարտական Ատենախօսութիւնները», *Երեանի Համալսարանի Գիտ. Աշխատութիւններ*, Հտր. 23, 1946, էջ 423:

⁴ Ն. Թահմիզեան, *Գրիգոր Նարեկացիի եւ Հայ Երաժշտութիւնը V-XV դդ.*, Երեան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1985, էջ 45:

⁵ Գրիգոր Խլաթեցու կեանքն ու գործունէութիւնը ամբողջապէս ներկայացուած են Ա. Մաթետսեանի եւ Ս. Մարաբեանի *Գրիգոր Ծերենց Խլաթեցի* ուսումնասիրութեան մէջ, Երեան, «Սարգիս Խաչեց» Հրատ., 2000:

⁶ ՏԵ՛ս Ա. Մուշեղեան, «Գրիգոր Խլաթեցու Երաժշտաբանաստեղծական Ժառանգութիւնը», *Բանբեր Մարենադարանի*, Հտր. 22, 2015, էջ 54-72:

⁷ «Պատմութիւն Մեծի Բարունապետին Թումայի, Ջոր Արարեալ եւ Կիրակոսի Բանասեր Վարդապետի»՝ Գ. Վրդ. Յովսէփեան, *Թովմա Մեծութեցու Կեանքը (կենսագրական նոր նիւթերով)*, Վաղարշապատ, Էլեկտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1914, էջ 6:

⁸ Նոյն, էջ 5:

⁹ Նոյն:

¹⁰ Լ. Խաչիկեան, «Թովմա Մեծութեցի (1378–1446). Դարաշրջանը, Կեանքը, Գործը, «Պատմութիւնը», *Աշխատութիւններ*, Հտր. Գ, Երեան, «Նայիրի», 2008, էջ 699-700:

¹¹ Մեծութեցու այս ինքնագիր յիշատակարանը, որ անթուակիր է, արտագրուած է նախագաղափար օրինակից եւ գտնուած է ՄՄ № 5212 ձեռագրում (ժողովածոյ, 1458 թ., Խնդրակատար Ս. Աստուածածնի անապատ, գրիչ՝ Յոհանէս, թ. 432ա): Խաչիկեանն այն իրատարակել է առանձին՝ տեղադրելով 1446ի թուաշարքում, վայրը՝ Մեծփականք (ԺԵ. *Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ*, Մասն Առաջին (1401-1450 թթ.), կազմ.՝ Լ. Ս. Խաչիկեան, Երեան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատ., 1955, էջ 597-98):

¹² Թովմա Մեծութեցու խմբագրած ժողովածուների մասին տե՛ս՝ Գ. Վրդ. Յովսէփեան, *Թովմա Մեծութեցու Կեանքը*, էջ ԻԹ. նաեւ՝ Հ. Վարդան Հացունի, *Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին*, Վենետիկ-Ս. Ղազար, 1965, էջ 313-14:

Նաեւ՝ Ն. Թահմիզեան, «Խազագրութեան Արուեստն Իր Պատմական Զարգացման Մէջ», *Բանբեր Մարենադարանի*, Հտր. 12, 1977, էջ 97-98. նաեւ՝ Ա. Մաթետսեան, *Մեծփականքի Գրչութեան Կենտրոնը (ԺԲ-ԺԴ. դդ.)*, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի, 1997, էջ 69, 148-50:

¹³ Առաքել Բաղիշեցի, «Դարձեալ յԱռաքել Վարդապետէ. Վասն Վարդապետին Իւրոյ Գրիգոր Ծերենց Կոչեցեալ»՝ Մաթետսեան եւ Մարաբեան, էջ 210-18:

¹⁴ Առաքել Բաղիշեցի, «Եղերեբութիւն Ի Մահ Նահատակութեան Ծերենց Գրիգոր Վարդապետի Խլաթեցոյ»՝ *Հայոց Նոր Վկաները (1153-1843)*, աշխ.՝ Յ. Մանանդեան եւ Հ. Աճառեան, Վաղարշապատ, տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 1903, էջ 274-79:

¹⁵ *Առաքել Բաղիշեցի*, ուսումնասիրութիւն, քննական քննադրեր եւ ծանօթագրութիւններ՝ Ա. Ղազինեան, Երեան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1971, էջ 49-51:

- ¹⁶ ԺԵ. Դարի Հայերէն, Ա., էջ 220:
- ¹⁷ ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշարակարաններ, Մասն երրորդ (1481-1500 թթ.), կազմ.՝ Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1967, էջ 424:
- ¹⁸ Նոյն, էջ 12:
- ¹⁹ Նոյն, էջ 39:
- ²⁰ Նոյն, էջ 40:
- ²¹ Նոյն, էջ 80:
- ²² Նոյն, էջ 150:
- ²³ F. C. Conybeare, *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum*, Oxford University Press, 1913, էջ 107, MS. OR. 5088 (49), Fol. 307. Նաեւ՝ Հայր Ներսէս Ալիկեան, *Գաազանագիրք Կաթողիկոսաց Աղթամարայ, Վիեննա, Մխիթարեան Տպարան*, 1920, էջ 123-24:
- ²⁴ Լ. Խաչիկեան, «Հայաստանը ԺԵ. Դարի Առաջին Կեսին»՝ *Աշխարհութիւններ, Հտր. Գ*, էջ 149. Նաեւ՝ Մաթեոսեան, *Մեծփականքի Գրչութեան Կենտրոնը*, էջ 104. Նաեւ՝ Նորայր Արք. Ծովական, «Յովհաննէս Քահանայ Մանկասարենց (1418"-1505")», *Սիոն*, Մայիս-Յունիս 1979, էջ 108-109:
- ²⁵ Նրա մասին տե՛ս՝ Լ. Թումանեան, «Գրիչ եւ Մանրանկարիչ Թումա Մինասենց», *Էջմիածին*, 2011, Թ, էջ 123-29: Յօդուածում զետեղուած է նաեւ Մինասենցի ձեռագրերի ամբողջական ցանկը, էջ 127-29:
- ²⁶ ԺԵ. Դարի Հայերէն, Գ., էջ 185, 191, 268. Նաեւ՝ Հ. Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան*, Հտր. Բ., Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1944, էջ 334:
- ²⁷ ԺԵ. Դարի Հայերէն, Ա., էջ 582-83:
- ²⁸ ՄՄ, ձեռ. № 8599, թ. 326բ. Նաեւ՝ ԺԵ. Դարի Հայերէն, Ա., էջ 321. Նաեւ՝ Թահմիզեան, «Խազագրութեան Արուեստն Իր», էջ 104: «Ի Տուն Տալ Խազելոյն», իմա՝ մեղեդիները խազերով տուն առ տուն նշանագրել (նոյն տեղում):
- ²⁹ ՄՄ, ձեռ. № 3481, թ. 355ա-356բ. Նաեւ՝ ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշարակարաններ, Մասն երկրորդ (1451-1480 թթ.), կազմ.՝ Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, Հայկական ՍՍՌ Գիտութիւնների Ակադեմիայի Հրատ., 1958, էջ 219. Նաեւ՝ Թահմիզեան, «Խազագրութեան Արուեստն Իր», էջ 104:
- ³⁰ Թահմիզեան, «Խազագրութեան Արուեստն Իր», էջ 103:
- ³¹ «Թուղթ Սիմէօնի Սոյո Կաթողիկոսի Առ Փիլիպպոս Էջմիածնի Կաթողիկոս», *Արարադ*, Էջմիածին, 1904, էջ 485:
- ³² Ձեռագրական աղբիւրներում երաժիշտ-փիլիսոփաների մասին մեծաւ մասամբ տուկ հպանցիկ տեղեկութիւններ են պահպանուել: Հաշով առնելով վկայութիւնների սղութիւնը, ներառել ենք մինչ նշուած դարաշրջաններն ապրած միջանի անձանց եւ: Յանկում նշում են երաժիշտների անունները, գործունէութեան վայրը, թուականը (եթէ անյայտ է՝ ժամանակաշրջանը): Յանկն, անշուշտ, ամբողջական չէ եւ եւթական է ընդլայնման: Տեղեկութիւնները քաղել ենք հետեւեալ աղբիւրներից.- *Հայերէն Ձեռագրերի Յիշարակարաններ, Ե.-ԺԲ. դդ.*, աշխ.՝ Ա. Ս. Մաթեոսեան, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1988. Նաեւ՝ *Հայերէն Ձեռագրերի Յիշարակարաններ, ԺԳ. Դար*, կազմ.՝ Ա. Ս. Մաթեոսեան, Երեւան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., 1984. Նաեւ՝ *ԺԴ Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշարակարաններ*, կազմ.՝ Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1950. Նաեւ՝ ԺԵ. Դարի Հայերէն Ձեռագրերի Յիշարակարաններ, Ա., Բ.,

Գ. Նաեմ' Հ. Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան*, Հտր. 1-5, Երեւան, 1942-62. Նաեմ' Հայր Համազասպ Ոսկեան, *Վասպուրական-Վանի Վանքերը*, Ա. Բ., Գ., Վիեննա, Մխիթարեան տպարան, 1940-1947. Նաեմ' Նոյնի' *Տարօն-Տորոքերանի Վանքերը*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1953. Նաեմ' Հայր Ներսէս Ակիսեան, *Բաղէշի Դպրոցը (1500-1704)*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1952: Օգտուել ենք նաեւ ձեռագրացուցակներից ու այլազան գրականութիւնից:

³³ Ոսկեան, *Տարօն*, էջ 144:

³⁴ Հայր Ղեւոնդ Ալիշան, *Հայապատում. Պատմութիւն Հայոց*, Հտր. Բ., Վենետիկ, Ս. Ղազար, 1901, էջ 468. Նաեմ' Ե.-ԺԲ. դր. Յիշ., էջ 294:

³⁵ ԺԳ. *Դարի Հայերէն*, էջ 46:

³⁶ ԺԳ. *Դարի Հայերէն*, էջ 46:

³⁷ ԺԳ. *Դարի Հայերէն*, էջ 47:

³⁸ Ոսկեան, *Տարօն*, էջ 57. Նաեմ' Մայր Յուցակ Ձեռագրաց Սրոց Յակոբեանց, Հտր. *Վեցերորդ*, կազմ.՝ Ն. Եպս. Պողարեան, Երուսաղէմ, Տպ. Սրոց Յակոբեանց, 1972, էջ 210. Նաեմ' *Հայերէն Ձեռագրերի Յիշատակարաններ*, ԺԴ Դար, Մասն Ա. (1301-1325 թթ.), կազմ.՝ Լ. Խաչիկեան, Ա. Մաթետեան, Ա. Ղազարոսեան, Երեւան, «Նայիրի» Հրատ., 2018, էջ 225:

³⁹ ԺԴ. *Դարի Հայերէն (1950 թ. հրատ.)*, էջ 492, 539, 559. Նաեմ' Ա. Մաթետեան, «Մոկաց Սարի Ս. Գեորգ Վանքի Գրչութեան Կենտրոնը XIV-XV Դարերում», *Բանբեր Մալբենադարանի*, Հտր. 6, 1962, էջ 199-200:

⁴⁰ Խ. Գ. Լեւոնեան, «Աղթամարայ Կաթողիկոսները Սկիզբէն Ց'վերջ», *Բիւզանդիոն*, Կ. Պոլիս, 1900, № 1194. Նաեմ' Ա. Շահինեան, «Փոյթկու Սուրբ Գեորգ Կամ Սարի Սուրբ Գեորգ Վանքը», *Էջմիածին*, 1963, ԺԱ, էջ 60:

⁴¹ Սորբ – գիւղ Վանի նահանգի Գաւաշ գաւառակում:

⁴² Լեւոնեան, «Աղթամարայ Կաթողիկոսները». Նաեմ' Ոսկեան, *Վասպուրական*, Գ. Մաս, էջ 889. Նաեմ' Շահինեան, «Փոյթկու Սուրբ Գեորգ», էջ 60:

⁴³ ՄՄ, ձեռ. № 4695, Ճաշոց, Աղթամար, 1421 թ., գրիչ՝ Թումայ, թ. 465բ. Նաեմ' ԺԵ. *Դարի Հայերէն*, Ա., էջ 252:

⁴⁴ Ղեւոնդ վարդապետ Փիրղալեմեան, *Նօյարք Հայոց*, Կ. Պոլիս, Տպ. Նշան Կ. Պէրպէրեան, 1888, էջ 87. Նաեմ' ԺԵ. *Դարի Հայերէն*, Ա., էջ 579-82, 596. Նաեմ' Ե. Լալայեան, «Վասպուրական. Նշանաւոր Վանքեր», *Ազգագրական Հանդէս*, 1911, էջ 52. Նաեմ' *Դիւան Հայոց Պատմութեան*, Գիրք Ժ, Մանր Մալբենագիրք, ԺԵ.-ԺԹ. Դար, կենսագրական տեղեկութիւններով եւ ծանօթութիւններով հրատ. Գիտ Ա. Քահ. Աղանեանց, Թիֆլիս, ԵլքետրաշարԺ տպարան Օր. Ն. Աղանեանցի, 1912, սին. ԻԷ:

⁴⁵ Փիրղալեմեան, էջ 142. Նաեմ' Հ. Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան*, Հտր. Դ, Երեւան, Պետական Համալսարանի Հրատ., 1948, էջ 447. Նաեմ' Ոսկեան, *Տարօն*, էջ 112:

⁴⁶ Հ. Ն. Վ. Ակիսեան, *Տաղասացներ եւ Տաղեր*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1968, էջ 131-39. Նաեմ' Աճառեան, *Հայոց Անձնանունների*, Հտր. Դ, էջ 338:

⁴⁷ Ոսկեան, *Տարօն*, էջ 256:

⁴⁸ ԺԵ. *Դարի Հայերէն*, Գ., էջ 268:

⁴⁹ ՄՄ, ձեռ. № 6495, Գանձարան, 1490 թ., Արճէշ, գրիչ՝ Յովանէս Արճիշեցի, թ. 1բ-2ա:

- ⁵⁰ ՄՄ, ծեռ. № 5437, Անտարան, 1595 թ., Ս. Կանանց կամ Ս. Կարապետի վանք (Մոկթ), գրիչ՝ Առաքել արեղայ, ծաղկող՝ Խաչատուր Խիզանցի. նաեւ՝ Ա. Շահինեան, «Մոկաց Աշխարհի Սուրբ Կարապետ Վանքի Ձեռագրերը», *Էջմիածին*, 1963, Դ, էջ 45:
- ⁵¹ *Դիւան Հայոց Պարմութեան, Գիրք Ժ*, սիւն. 501. նաեւ՝ Ոսկեան, *Վասպուրական, Ա. մաս*, էջ 310, 312:
- ⁵² ՄՄ, ծեռ. № 7725, 1595 թ., Հիզան, գրիչ՝ Գրիգորիս, թ. 25ա:
- ⁵³ Ոսկեան, *Վասպուրական, Ա. մաս*, էջ 313-14. նաեւ՝ Յ. Քիրտեան, «Համառոտ Յուցակ Հայերէն Գրչագիրներու Քիրտեան Հաաքածոյի Ի Ուիչիդա, Կանգաս, ԱՄՆ», *Բանբեր Մարտնադարանի*, Հտր. 11, 1973, էջ 410. տե՛ս ծեռ. № 33, Անտարան, 1597 թ., Վասպուրական, Աանց գիտաքաղաք, թ. 302բ. նաեւ՝ *Դիւան Հայոց Պարմութեան, Գիրք Ժ*, սիւն. 33. նաեւ՝ *Յուցակ Հայերէն Ձեռագրաց Վասպուրականի, Պրակ Առաջին*, կազմ.՝ Ե. Լալայեան, Հրատ.՝ Հայոց Ազգագրական Ընկերութեան, 1915, տպարան «Էսպերանտո», Թիֆլիս, սիւն. 719:
- ⁵⁴ *Դիւան Հայոց Պարմութեան, Գիրք Ժ*, սիւն. 33. նաեւ՝ Ոսկեան, *Վասպուրական, Ա. մաս*, էջ 310:
- ⁵⁵ *Դիւան Հայոց Պարմութեան, Գիրք Ժ*, էջ ԼԱ. նաեւ՝ Ոսկեան, *Վասպուրական, Ա. մաս*, էջ 314:
- ⁵⁶ Ակիւնեան, *Տաղասացներ*, էջ 143-49:
- ⁵⁷ Քիրտեան, էջ 411:
- ⁵⁸ Լեւոնեան, «Աղթամարայ Կաթողիկոսները», *Քիզանդիոն*, 1900, № 1197:
- ⁵⁹ Ոսկեան, *Տարոս*, էջ 123:
- ⁶⁰ Նոյն, էջ 123-24:
- ⁶¹ Նոյն, էջ 129:
- ⁶² Մ. Վ. Մաքսութեանց, *Հաաքարան Անուանց Կաթողիկոսաց (Աղթամարայ)*, Ս. Էջմիածին, ԷլքստաշարԺ տպարան Մայր Աթոռոյ, 1916, էջ 64. նաեւ՝ Ակիւնեան, *Գաազանագիրք*, էջ 167, 199:
- ⁶³ Դրանց մի մասը յայտնի, իսկ առանելագոյն մասը՝ անանուն հեղինակների գործեր են:
- ⁶⁴ Նրա մասին տե՛ս՝ Հ. Անաոեան, *Հայոց Անծնանունների Բաաարան, Հտր. Գ*, երեան, Պետական Համալսարանի Հրատ., 1946, էջ 509. նաեւ՝ Պ. Խաչատրեան, «Յակոբ Արծկէցի», *Հայկական Սովետական Հանրագիտարան, Հտր. 6*, երեան, 1980, էջ 69. նաեւ՝ Հայր Ներսէս Ակիւնեան, «Յակոբ Նետարեանց եպիսկոպոս Արծկէ. Հայ Բանաստեղծ Մը ԺԵ. Դարու երկրորդ Կեսէն», *Մարտնագրական Հետազոտութիւններ, Հտր. Դ*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1988, էջ 119-39:
- ⁶⁵ Ակիւնեան, «Յակոբ Նետարեանց», էջ 124: Յիշատակարանային այս հատուածը հեղինակը քաղել է 1501ին Ջաքարիա գրչի ընդօրինակած Մաշտոցից, որը պահուում է Թիպինկէնի Արքայական Համալսարանի Գրադարանում՝ F. N. Finck und L. Gjandschejian, *Systematisch-Alphabetischer Hauptkatalog der Königlichen Universitätsbibliothek zu Tübingen*, M. Handschriften. XIII. Verzeichnis der armenischen Handschriften der Königlichen Universitätsbibliothek. Tübingen, Druck von Max Schmiersow Vorm. Zahn & Baendel, Kirchhain N.-L., 1907, Ma XIII 27, Bl. 213a:
- ⁶⁶ Ակիւնեան, «Յակոբ Նետարեանց», էջ 122-23:

- ⁶⁷ Մայր Յուզակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հոր. երկրորդ, կազմ.՝ Ն. Եպս. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1967, էջ 89:
- ⁶⁸ Ակինեան, «Յակոբ Նետարեանց», էջ 128-39. նաեւ՝ Ն. Արք. Ծովական, «Յակոբ Եպս. Նետարեանց», Սիոն, Յունիս-Յովիս-Օգոստոս, 1982, էջ 135:
- ⁶⁹ ՄՄ, ձեռ. № 6495, գրիչ՝ Յովհաննէս Արճիշեցի, թ. 175բ-176ա:
- ⁷⁰ ՄՄ, ձեռ. № 6426, Ժէ դ., տեղի՝ անյայտ, գրիչ՝ Խաչատուր, թ. 121բ եւ 319ա:
- ⁷¹ Ա. Մուշեղեան, «Մի Նշխար Երաժիշտ-Փիլիսոփայ Ներսէս Վարդապետ Մոկացու Երաժշտարանաստեղծական Ժառանգութիւնից», *Բանբեր Մարեանդարանի*, Հտր. 25, 2018, էջ 321-36:
- ⁷² Նրա մասին տե՛ս՝ Աճառեան, *Հայոց Անձնանունների*, Հոր. 9, էջ 691-92. նաեւ՝ Հայր Ներսէս Ակինեան, «Յովհաննէս Վ. Բրգութեան Ոստանցի», *Հանդէս Ամսօրեայ*, 1937, № 1-5, էջ 215. նաեւ՝ Ակինեան, *Բաղէշի Դպրոցը*, էջ 56-66:
- ⁷³ Ակինեան, *Բաղէշի Դպրոցը*, էջ 57:
- ⁷⁴ Նոյն, էջ 61:
- ⁷⁵ Նոյն, էջ 163-66:
- ⁷⁶ Նոյն, էջ 172-183:
- ⁷⁷ Լալայեան, *Յուզակ Հայերէն*, սիւն. 27. նաեւ՝ Ակինեան, *Բաղէշի Դպրոցը*, էջ 232:
- ⁷⁸ Ակինեան, *Բաղէշի Դպրոցը*, էջ 233-36:
- ⁷⁹ Ձեռ. № 2274, էջ 45ա. տե՛ս՝ Մայր Յուզակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հոր. եօթներորդ, կազմ.՝ Ն. Արք. Պողարեան, Երուսաղէմ, տպարան Սրբոց Յակոբեանց, 1974, էջ 369:
- ⁸⁰ Նոյն, էջ 38ա:
- ⁸¹ Ձեռ. № 123 (հին թիւ՝ 349), թ. 191ա. տե՛ս՝ Յուզակ Հայերէն Ձեռագրաց Զմմառի Կանքի Մարեանդարանին, կազմ.՝ Մեսրոպ Վրդ. Քէշիշեան, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1964, էջ 250. նաեւ՝ Ակինեան, *Բաղէշի Դպրոցը*, էջ 234-35, 318-20:
- ⁸² Գրիգոր Մարգուանեցու տպարանում իրականացուել են մի շարք արժէքատու հրատարակութիւններ, այդ թում՝ Յովհան Ոսկեբերանի, Ագաթանգեղոսի, Գրիգոր Նարեկացու, Գրիգոր Տաթեացու երկերը, *Տաղարան* (1698), *Խորհրդարեւոր* (1706) ժողովածուները եւն.: Նշուած ծիսամատենների մասին տե՛ս՝ Հ. Գ. Զարբիանայեան, *Հայկական Մարեանագիտութիւն*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1883, էջ 280, 658:
- ⁸³ *Գիրք Որ Կոչի Այսմատուրք*, Կոստանդնուպոլիս, 1730, ի տպարանի Գրիգոր դպրի Մարտնանեցոյ, էջ ԷԺԺ. նաեւ՝ Բ. Ծ. Վ. Կիլէւերեան, *Կողոր Յովհաննէս Պատրիարք. Պատմագրական եւ Բանասիրական Ուսումնասիրութիւն*, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1904, էջ 157:
- ⁸⁴ Ակինեան, *Բաղէշի Դպրոցը*, էջ 344-59:
- ⁸⁵ Սիմէոն Կաթողիկոս Երեանցի, *Ջամբո*, Վաղարշապատ, տպարան Ա. Կաթողիկէ Էջմիածնի, 1873, էջ 29. նաեւ՝ Մ. Արք. Օրմանեան, *Ազգապատում*, Կոստանդնուպոլիս, Հրատ.՝ Վ. եւ Հ. Տէր-Ներսէսեան, 1914, գլ. 2873: Արքահամ Բ. Խոշաբեցու մասին տե՛ս նաեւ՝ Ակինեան, *Բաղէշի Դպրոցը*, էջ 372-78:
- ⁸⁶ Յակոբ Անասեան, *Հայկական Մարեանագիտութիւն*, Ե.-ԺԸ. դդ., Հոր. Ա., Երեան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1959, սիւն. 101-102:

- ⁸⁷ Աղթամարի Պապմանձակութային ժառանգութիւնը, հեղինակ-կազմող՝ Կ. Մաթեոսեան, մասնակից հեղինակներ՝ Լ. Թումանեան, Ա. Ասրեան, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2013:
- ⁸⁸ Աճառեան, Հայոց Անձնանունների, Հրդ. Բ, էջ 189. Նաեւ՝ Հ. Յակոբեան, Վասպուրականի Մանրանկարչութիւնը, Գիրք Ա, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1976, էջ 67-96. Նաեւ՝ Լ. Թումանեան, «Աղթամարի Գրչութեան Կենտրոնը», Էջմիածին, 2010, Թ, էջ 119-120. Նաեւ՝ Ս. Մանուկեան, Զաքարիա Աղթամարցու Ձեռագրական Վաստակը, Էջմիածին, 2015, Գ, էջ 122-132:
- ⁸⁹ Յովսէփի Աղթամարցու ձեռագրացանկը տե՛ս՝ Թումանեան, «Աղթամարի Գրչութեան», էջ 122, 125-26 եւ յետոյ:
- ⁹⁰ ՄՄ, ձեռ. № 10956, 158 եւ 3534:
- ⁹¹ ԺԵ. Դարի Հայերէն, Գ., էջ 238-39:
- ⁹² ՄՄ, ձեռ. № 6326, գրիչ՝ Թումայ:
- ⁹³ ՄՄ, ձեռ. № 2033, թ. 284բ:
- ⁹⁴ ՄՄ, ձեռ. № 10741:
- ⁹⁵ Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մալոբնադարանին Մխիթարեանց Ի Վենետիկ, Հրդ. Դ, Շարակնոց-Ճաշոց-Ժամագիրք-Խորհրդաւորեպր-Մանրամունք-Կցուրդք, յօրինեց Հ. Սահակ Վրդ. Ճեմնմեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1993, ձեռ. № 770 (սիւն. 135) եւ № 1365 (սիւն. 139):
- ⁹⁶ ՄՄ, ձեռ. № 945, թ. 1ա. Նաեւ՝ Գարեգին Արք. Յովսէփեան, «Նորից Գրիգորիս Աղթամարցու Մասին», Հանդէս Ամսօրեայ, 1930, № 1-2, սիւն. 51-52:
- ⁹⁷ Հ. Յակոբեան, «Յովսէփի Աղթամարցի», Հայկական Սովետական Հանրագիտարան, Հրդ. 6, էջ 578:
- ⁹⁸ Հ. Ն. Վ. Ալիսեան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս Աղթամարի. Կեանքը եւ Քերթումները, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1958, էջ ԻԶ եւ 36:
- ⁹⁹ Հ. Ն. Վ. Ալիսեան, Զաքարիա Եպիսկոպոս Գնունեաց եւ Իւր Տաղերը, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1910, էջ 43:
- ¹⁰⁰ Ալիսեան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս, էջ ԻԳ:
- ¹⁰¹ Տաղերի մասին տե՛ս՝ Կ. Կոստանեանց, Գրիգորիս Աղթամարցին եւ Իւր Տաղերը: Յանելոած Աղէքսանդրի Պապմութեան Կաֆաները, Թիֆլիս, Տպ. Մ. Շարածէ, 1898. Նաեւ՝ Հ. Ն. Վ. Ալիսեան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս. Նաեւ՝ Գրիգորիս Աղթամարցի, Ուսումնասիրութիւն, Բնագրեր եւ Ծանօթագրութիւններ՝ Մ. Առաքելեան, Երեւան, Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատ., 1963:
- ¹⁰² ՄՄ, Նորագոյն հաւաքածոյ, ձեռ. № 5, էջ 163:
- ¹⁰³ Յովսէփեան, «Նորից Գրիգորիս Աղթամարցու», սիւն. 44-45:
- ¹⁰⁴ Ալիսեան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս, էջ ԼԲ, Խէ:
- ¹⁰⁵ ՄՄ, ձեռ. № 962, Մաշտոց-Գանձարան, 1530 թ., Արճէշ, գրիչ՝ Յովանէս. Նաեւ՝ Ալիսեան, Գրիգորիս Ա. Կաթողիկոս, էջ ԼԶ-ԼԸ. Նաեւ՝ Յովսէփեան, «Նորից Գրիգորիս Աղթամարցու», սիւն. 44-46:
- ¹⁰⁶ Ձեռ. № 298, Հաւաքումն Բանից Նախնեաց Ե., 1868, Կ. Պոլիս, թ. 5բ. տե՛ս՝ Հ. Բարսեղ Վ. Սարգիսեան, Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Մալոբնադարանին Մխիթարեանց Ի Վենետիկ, Վենետիկ, Մխիթարեան տպարան, 1924, սիւն. 1097-98. Նաեւ՝ Մայր Յուցակ Ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Հրդ. Երկրորդ, ձեռ. № 473 (էջ 460):

- ¹⁰⁷ Յիշատակարանները հրատարակուած են՝ Գ. Արք. Յովսէփեան, *Խաղրակեանք Կամ Պողոշեանք Հայոց Պապմոլեան Մէջ*, Հլրր. Գ., Նիւ Եորք, 1942/3, սիւն. 123-24. Նաեւ՝ Ակինեան, *Գրիգորիս Ա. Կաթողիկոս*, էջ Ծ-ԾԱ: Յովսէփեանը ձեռագրի «յուսուցելն» ուղղել է «յուսուցանելն»: Ակինեանը տպագրել է նոյն ձեւով:
- ¹⁰⁸ Ակինեան, *Զաքարիա Եպիսկոպոս*. Նաեւ՝ Աճառեան, *Հայոց Անձնանունների Բառարան*, Հլրր. Բ, էջ 198:
- ¹⁰⁹ Մաքսուդեանց, *Հաաքարան*, էջ 83-84. Նաեւ՝ Ե. Տէր Մկրտիչեան, «Վանի Գրական Մշակներ. Ներսէս Աղթամարցի», *Արծուի Վասպուրական*, ամսաթերթ, պաշտօնաթերթ Ամերիկայի Վասպուրական Միութեան, 1942, № 11, էջ 8. Նաեւ՝ Abba Seraphim, "The Forgotten Patriarchate: A Brief Historical Note on the Armenian Catholicosate of Aghtamar" <http://britishorthodox.org/glastonburyreview/issue-123-the-forgotten-patriarchate/> :

ARMENIAN MUSIC CULTURE IN THE MONASTERIES OF VAN-VASPUKAK AND NEARBY REGIONS (14th-18th CENTURIES) (Summary)

ASTGHİK MUSHEGHYAN
a.musheghyan@gmail.com

Armenian medieval monasteries along with adjacent monastic schools played a significant role in the development of Armenian musical culture. Noteworthy among them were educational centres located near Lake Van in the provinces of Van-Vaspuakan, Taron-Turuberan, Aghdznik and Moks in Greater Armenia.

Hardly can one overestimate the significance of the musician-philosophers who worked there. As a result of their efforts, liturgical books and other valuable manuscripts were copied, and important musical traditions were established. Indeed, the monastery scribes, musician-theorists, *khaz* notation scholars and authors of sacred chants had a great impact on Armenian music. Among others, one can mention outstanding musicians like Grigor Tatevatsi, Grigor Khlatsi, Tovma Metsopetsi, Hakob Netrarents, Grigoris Aghtamarts, and others, who contributed immensely to the development of Armenian professional sacred chanting, thus becoming the worthy descendants of the musical art of their brilliant ancestors from St. Mesrop Mashtots to St. Grigor Narekatsi.